



## ՕԴԱՆԱՒԵՐ

Գոյութիւն ունին զանազան տեսակի օդանաւեր, ինքնաթիռ, ուղղաթիռ, օդապարիկ...:

### Ինչպէ՞ս կը թռչի ինքնաթիռ մը

Ինքնաթիռը թռչող մեքենայ մըն է, որ ինքզինք օդին մէջ կը պահէ շնորհիւ իր թեւերուն: Եթի ինքնաթիռը օդակայանին մէջ կ'արագանայ, կը հասնի այնպիսի արագութեան մը որուն ստեղծած հովին վերամբարձ ուժը բաւարար կ'ըլլայ զայն գետինեն բարձրացնելու:

### Բարձրութեան դեկերը

Այս երկու դեկերը կը ծառայեն ինքնաթիռին պոչը բարձրացնելու կամ իշեցնելու:



Թիւր Պատրաստե՛՝ Ռիթա Կաղեցն-Տիբոհեցն  
Նկարազարե՛՝ Ռաֆահ Քեծիսեան

### Դեկը

Դեկը կրնայ ինքնաթիռին պոչը կողմնակիթեքել՝ ինչ որ ուղղութիւն փոխելու կը ծառայէ:



### Թեւակները

Եթէ մէկ թեւին թեւակը դեպի վար, իսկ միւսինը դեպի վեր դարձնենք, ինքնաթիռը կը թեքի եւ կը դառնայ իշած թեւակին կողմը:

### Յայտամուղ շարժակներ

Արդի օդանաւերու մէծամասնութիւնը ունի յայտամուղ շարժակներ: Յառաջամասին վրայ գտնուող գօրաւոր հովահար մը մէծ քանակութեամբ օդ կը ծծէ, որ կը խտացուի ուրիշ հովահարի մը կողմէ: Օդ-վառելանիւթ խառնուրդը կ'այրի եւ արտադրուած կազերը ուժգին կերպով դուրս կը ժայթքին ետեւեն՝ ինչ որ ինքնաթիռը յառաջ կը մղեն:

### Ուղղաթիռ

Օդանաւերը օդին մէջ կը պահուին իրենց թեւերուն շնորհիւ: Ուղղաթիռները, սակայն, հաստատ թեւեր չունին: Զանոնք կրողը ոռապութիւն (Մարդամեքենայ «Գ.») մը առանցքին վրայ հաստատուած երկար թիեր են: Եթի ոռապութիւնը բաւարար արագութեամբ կը դառնայ, յառաջացող վերամբարձ ուժը զայն ուղղահայեաց կերպով կը բարձրացնէ: Յորիզոնական տեղափոխութեան համար, ոռապութիւն առանցքը կը թեքեն:

### Գիտե՞ս թէ...

Արդի ուղղաթիռ օդանաւերուն յայտամուղները կը գթնուին մարմնին կողմերուն վրայ:

## ԶԱԳՈՒԿՆԵՐՍ ԿԸ ԳՐԵՆ

### Բարով Եկար Նոր Տարի

2018-ը ինծի համար անակնալներով լեցուն եւ բախտաբեր տարի մըն էր, որովհետեւ առիթ ունեցայ բազմաթիւ մրցումներու մասնակցելու եւ լաւագոյն դիրքեր գրաւելու, որոնցմէ կրնամ յիշել Ուսումնական Խորհուրդի կազմակերպած շարադրութեան մրցումը եւ ՀՄԸՍ-ի կազմակերպած մըրցումը, որուն առաջին դիրքը գրաւեցի, Յալեպի միջ-դպրոցական պետական ճատրակի մրցաշարքին եւ ակումբներու միշել կատարուած պարան ցատկելու մրցումին երկրորդ դիրքը գրաւեցի:

Սակայն մեծ մօրս կորուստը մեծ ցաւ պատճառեց ինծի:

Մեծ ուրախութիւն էր, երբ առաջին անգամ ըլլալով մասնակցեցայ զոյգ բանակումներու՝ ՀՄԸՍ-ի «Դարեկան» եւ Սուրիոյ Պատանեկան միութեան կազմակերպած «Սարդարապատ» բանակումին:

Կ'երազէի Լիբանան մեկնիլ, որպէսզի տեսնեմ եղբօրս, մօրաքրոջ ընտանիքը եւ մեծ մօրս, որոնց երեք տարի է չի տեսած, բայց դժբախտաբար չիրականացաւ երազ, սակայն Լաթաքիա երթալով ճատրակի մրցումին մասնակցեցայ եւ առաջին դիրքը գրաւելով Յալեպ վերադարձայ: Կը փափաթիմ 2019-ը նոյնպէս հաճելի, բախտաբեր եւ յաջողութիւններով լի տարի մը ըլլայ:

Սայթ Գեւոյեան

Ե. կարգ

Ազգ. Քարեն Եփիկ ճեմարան

Սիրելի՝ Կաղանդ Պապա,

Մեծ հաճոյքով կը սպասեմ տարուան վերջին ամիսը, ան շատ հաճելի կը թուի ինծի: Դեկտեմբերի սկիզբը ամեն տուն զարդերով ու տօնածառով կը զարդարուի, ինչ որ ուրախ մթնոլորտ կը ստեղծուի տան մէջ:

«Ծառէն լոյսեր, պերճանք, զարդարանք ու երազանք կախեցէ՞ք»:

Եւ ահա հասած է ուրախութեան ամիսը, որուն կը սպասէի 11 ամիսներէ ի վեր: Մենք զարդարեցինք մեր տունը գոյնզգոյն զարդերով:


Սիրելի՝ Կաղանդ Պապա, ես շատ նուերներ չեմ խնդրեր քեզմէ, այլ կ'ուզեմ միայն դասերուս մէջ յաջողութիւն, աշխարհի բոլոր երկիրներուն մէջ միշտ խաղաղութիւն ըլլայ, փոքրիկներուն փափաքները իրականանան, մարդիկ ուրախ ապրին եւ յաջողութեամբ լեցուն տարի մը ըլլայ:

Սիրով՝

Եաթեր Կիլտալեան

2. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան



# ՆՊԱՐԱՎԱԾԱՌ ՆՈՒՊԱՐԸ

## Յասմիկ Պոյմուշաբեան

Բաւական քալելէ ետք ան կանգ կ'առնէ. ի՞նչ տեսնէ... Պառաւը կը հասնի շենքի մը մուտքին եւ կը նստի աստիճաններուն վրայ, քանի մը մասերու կը բաժնէ լոլիկը եւ վարունգը: Կտոր մը լոլիկէն, կտոր մըն ալ վարունգէն կ'ուտե. ուրիշ ո՛չ մեկ բան... Նպարավաճառը կը խղճայ, կը մօտենայ ու կը հարցնէ անոր. «Մե՛ծ մայրիկ, տուն-տեղ չունի՞ս, ինչո՞ւ շենքին մուտքին նստած ես...»:



Խեղճ կինը գլուխը կը շարժէ առանց որեւէ բառ ըսելու: Նուպար աղբար, ազդուած, վազելով կը վերադառնայ իր վաճառատունը: Տոպրակներուն մէջ կը լեցընէ տեսակ-տեսակ համեղ պտուղներ, ինչպէս՝ նարինջ, պանան, մանտարին... բանջարեղեններ՝ կաղամբ, հազար, դդում, սմբուկ եւայլն, Յրակին ձեռքը կուտայ լեցուած տոպրակներն են մաս մը, ինքն ալ շալկելով մնացեալները կը փակէ խանութին փեղկը, արագօրէն ճամբայ կ'ելլէ Յրակին հետ եւ կ'երթայ պառաւին քով:

Յրակ ապշահար կ'ըսէ Նուպար աղբօր. «Վարպե՛տ, բնաւ չէ պատահած, որ այս ժամուն խանութի գոցես: Ի՞նչ կայ: Յաճախորդները պիտի չզարմանան

### Խանութի փակ տեսնելով»:

Նուպար աղբար կը պատասխանէ. «Կարեւոր չէ՛, հիմա աճապարէ՛, հետո արագ արագ քալէ՛, որպէսզի շուտ հասնինք»:

«Ո՞ւր պիտի հասնինք: Այս ուտելիքները որո՞ւ համար են», - հարցումներու շարան մը կ'ուղղէ Յրակ Նուպար աղբօր:

Կը հասնին շենքին մուտքին: Յրակ կը տեսնէ պառաւը, կը զարմանայ... կը մօտենան, ուտելիքները կը յանձնեն անոր: Պառաւը թէ՛ կ'ապշի, թէ՛ կ'ուրախանայ եւ ազնիւ շեշտով բարձրածայն կ'ըսէ. «Փա՛ռք քեզ, ՏԵ՛ր, փա՛ռք քեզ, ՏԵ՛ր, շատշատ շնորհակալ եմ ձեզմէ»:

Յրակ ու Նուպար աղբար գոհունակութեամբ եւ ուրախ սիրտով կը վերադառնան խանութ: Անոնք ստացած էին քով:



պառաւին օրինութիւնը եւ օգտակար դարձած անոր:

Յրակ դառնալով Նուպար աղբօր կ'ըսէ. «Այս վիճակով որքան մարդիկ կան աշխարհի տարածքին, որոնք օգնութեան կարիք ունին...»:

(Վերջ)



## ՏԻԵԶԵՐՅ, ԱՍՏՈՎԱՌՈՒՄԲԵՐ ԵՒ ԾԻՐ ԿԱԹԻՆ

Տիեզերքը ամբողջութիւնն է այն բոլոր իրերուն, որոնք գոյութիւն ունին անջրապետին մեջ: Տիեզերքը շատ մեծ է, այսքան մեծ, որ մեկը չի կրնար երեւակայել անոր մեծութիւնը: Տիեզերքին մեջ գոյութիւն ունին միլիառաւոր աստղախումբեր, որոնք կը պարունակեն անթիւ աստղեր:

Տիեզերքը կը պարունակէ հսկայական պարապ միջոցներ եւ նիւթի պատիկ «գունդ»եր՝ ցըրուած հոս ու հոն, այսինքն՝ աստղախումբեր:

### ԱՍՏՈՎԱՌՈՒՄԲԵՐ

Աստղախումբ մը հարիւրաւոր միլիառ աստղերու դրութիւն մըն է, որ նաեւ կը պարունակէ կազի եւ փոշիի ամպեր: Տարբեր մեծութեամբ եւ գոյսով՝ աստղերը միասին կը դառնան իրենց պատկանած աստղախումբին կեղրոնին շուրջը: Աստղախումբերը հազուադապօրեն առանձին կը գտնուին: Ընդհանրապէս կը խմբաւորուին երկուքով, երեքով, հարիւրով, հազարով եւ աւելի: Այս խմբաւորումները կը կոչուին աստղակոյտ: Կարգ մը աստղախումբեր պարոյրի ձեւ ունին, ուրիշներ՝ թերատական, տակաւին ուրիշներ՝ անկանոն ձեւեր:

### Ծիր Կաթին

Մեր աստղախումբը, կը գտնուի Տեղական Աստղակոյտին մեջ (Amas Local), որ երեսնեակ մը աստղակոյտ էր կը հաշուէ: Դիմացեն դիտուած՝ Ծիր Կաթինը պարոյրածէ է, իսկ կողմէն դիտուած՝ ան կը նմանի վիթխարի ուռուցիկ ոսպնեակի մը: Կը պարունակէ շուրջ 100 միլիառ աստղեր եւ կազի ու փոշիի անսահման ամպեր: Մեր արեւը այս աստղերէն մէկն է:

### Միզամածներ

Աստղերուն միջեւ գտնուող միջոցները կարծուածին չափ պարապ չեն, կը պարունակեն կազեր եւ փոշիներ, որոնք կ'երեւին «միզամած» կոչուած ամպերու ձեւին տակ: Կարգ մը միզամածներ ուրոյն լոյս կ'արտադրեն, ուրիշներ կը ցոլացնեն շրջակայ ամպերու լոյսը եւ կան նաեւ ուրիշներ, որոնք ոչ մեկ փայլը ունին:

